ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2020

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ե՞րբ է խեթական թագավորի և Հայասայի Խուկանա արքայի միջև կնքվել բարեկամության և փոխօգնության պայմանագիր.

1) Ք. ա. XII դարում
2) Ք. ա. XIII դարում
3) Ք. ա. XIV դարում
4) Ք. ա. XV դարում

2 Ե՞րբ է Կորբուլոնը բանակցություններ սկսել Վաղարշի ու Տրդատի հետ՝ վերջինիս թագադրելու՝ Ներոնի առաջարկի շուրջ.

1) 64 թ.
2) 60 թ.
3) 62 թ.
4) 65 թ.

3 Ե՞րբ է Մուշեղ սպարապետը զորքով շարժվել Գանձակ.

1) 379 թ.
2) 378 թ.
3) 368 թ.
4) 372 թ.

4 Ո՞ր թվականին սկսվեց պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմը.

1) 571 թ.
2) 572 թ.
3) 582 թ.
4) 591 թ.

5 Ե՞րբ է հրապարակվել ՀՅԴ հռչակագիրը.

1) 1894 թ.
2) 1890 թ.
3) 1893 թ.
4) 1892 թ.

6 Ե՞րբ է սկսվել Բալկանյան երկրորդ պատերազմը.

1) 1912 թ. նոյեմբերի 29-ին
2) 1913 թ. նոյեմբերի 29-ին
3) 1913 թ. հունիսի 29-ին
4) 1912 թ. հունիսի 29-ին

7 **Ե՞րբ է Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունվել «Դպրոցի կառավարման մասին» օրենքը.**

1) 1919 թ. հուլիսին
2) 1919 թ. սեպտեմբերին
3) 1918 թ. սեպտեմբերին
4) 1919 թ. մայիսին

8 **Ե՞րբ է Հայաստանը լիիրավ անդամակցել Եվրոպայի խորհրդին.**

1) 1996 թ.
2) 2001 թ.
3) 2015 թ.
4) 2004 թ.

9 **Վարչական առումով Վանի պետությունը բաժանված էր.**

1) սատրապությունների
2) նահանգների
3) մարզերի
4) ստրատեգիաների

10 **Ո՞ր գետի ափին է կառուցվել Բագարան քաղաք-սրբավայրը.**

1) Մեծամոր
2) Ախուրյան
3) Արածանի
4) Մեղրագետ

11 **Որտե՞ղ է գտնվում Քարքե լեռը.**

1) Կոգովիտում
2) Տարոնում
3) Աշտիշատում
4) Արտազում

12 **Որտե՞ղ էր գտնվում Կիլիկիան.**

1) Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում
2) Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում
3) Փոքր Ասիայի հյուսիս-արևելքում
4) Փոքր Ասիայի հարավ-արևելքում

13 **Որտե՞ղ է հրատարակվել Հ. Գաթըրճյանի «Տիեզերական պատմություն» աշխատությունը.**

1) Վենետիկում
2) Վիեննայում
3) Պետերբուրգում
4) Մոսկվայում

14 **Որքա՞ն է եղել հայ կամավորների թիվը 1915 թ. վերջին և 1916 թ. սկզբին.**

1) 10000
2) 12000
3) 6000
4) 5000

15 **Ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսում թուրքական պատվիրակությունը գլխավորում էր՝**

1) Ք. Կարաբեքիրը
2) Յ. Քեմալը
3) Մ. Քեմալը
4) Ն. Նարիմանովը

16 **Արմֆանի կազմում 1941 թ. որքա՞ն գիտահետազոտական հիմնարկներ էին գործում.**

1) 21
2) 15
3) 11
4) 16

17 **Ո՞ր արքայի մասին է հույն պատմագիր Պոլիբիոսի ստորև բերվող արտահայտությունը.**

«Արմենիայի մեծագույն մասի տիրակալ»:

1) Երվանդ III-ի
2) Արտաշես II-ի
3) Տիգրան II-ի
4) Արտաշես I-ի

18 **Ո՞վ է մեջբերված խոսքի հեղինակը.**

«Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»:

1) Գրիգոր Հարությունյանը
2) Ալեքսանդր Մյասնիկյանը
3) Յակով Զարոբյանը
4) Ասքանազ Մռավյանը

19 **Հողատիրության ինչպիսի՞ ձև էր պարգևականքը.**

1) ժառանգական մասնավոր հողատիրություն
2) պայմանական հողատիրություն
3) առուվաճառքի ենթակա մասնավոր հողատիրություն
4) եկեղեցապատկան-վանքապատկան հողատիրություն

20 **XX դ. սկզբին Ռուսաստանի հետադիմական վարչակարգի դեմ հայ ժողովրդի դիմադրությունը կազմակերպելու համար Թիֆլիսում ստեղծված մարմինը կոչվում էր՝**

1) Ինքնապաշտպանության կենտրոնական կոմիտե
2) Ազգային կենտրոնական վարչություն
3) Հայոց ազգային կենտրոնական բյուրո
4) Կենտրոնական գործադիր կոմիտե

21 **Կասրե-Շիրինում կնքված պայմանագրի հետևանքով՝**

1) Հայաստանն առաջին անգամ բաժանվեց Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև:
2) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ:
3) Հայաստանը կրկին վերաբաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև:
4) Հայաստանն ամբողջությամբ ընկավ Սեֆյան Պարսկաստանի տիրապետության տակ:

22 **Գտնել սխալ պատասխանը:**
Ժամանակավոր կառավարության 1917 թ. ապրիլի 26-ի որոշման հետևանքով՝

1) Օսմանյան կայսրությունից նվաճված տարածքի հայկական մասը՝ որպես առանձին վարչական միավոր, ստացավ «Թուրքահայաստան» անվանումը
2) Արևմտյան Հայաստանի տարածքում մինչև նրա կարգավիճակը վերջնակա-նապես որոշելը, ստեղծվեցին երեք հայկական մարզեր՝ Էրզրումի, Խնուսի, Վանի
3) Փոխվեց Ռուսաստանի քաղաքականությունը հայերի նկատմամբ
4) Ռուսաստանը պաշտոնապես ճանաչեց հայ ժողովրդի ազատ ինքնորոշման և ազգային անկախ պետություն ունենալու իրավունքը

23 **Արգիշտի I-ի նվաճողական ձեռնարկումները ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. արշավանքը դեպի Փոքր Ասիայի տարածք
բ. արշավանքը Զագրոսյան լեռներով մինչև Պարսուա
գ. Սևանա լճի ավազանի իշխանությունների միացումը Վանի թագավորությանը
դ. հաղթարշավը դեպի Ալիշտու

1) գ, դ, ա, բ
2) ա, գ, բ, դ
3) ա, գ, դ, բ
4) գ, ա, դ, բ

24 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել չորրորդը.**

ա. գեներալ Ի. Պասկևիչի զորքերի կողմից Ախալցխայի գրավումը
բ. Ղարաբաղի անցնելը Ռուսական կայսրությանը
գ. ռուս-թուրքական ճակատամարտը Ախուրյանի ափին՝ Փոքր Ղարաքիլիսա գյուղի մոտ
դ. «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրումը Երևանում հեղինակի ներկայությամբ
ե. Խորենացու «Հայոց պատմության» լույսընծայումը Պետերբուրգում ռուսերենով
զ. ռուսական զորքերի կողմից Սարդարապատի գրավումը

1) բ
2) զ
3) դ
4) գ

25 **Արշակունի արքաների անունները համապատասխանեցնել նրանց հետ կապված իրադարձություններին.**

1. Վաղարշ I	ա. Նրա գլխավորությամբ հայերը ջախջախեցին և Հայաստանից վտարեցին Կարակալլայի ուղարկած զորքը:
2. Տրդատ II	բ. Արածանիի ափին՝ Մշո դաշտում նա հիմնադրեց Մծուրք քաղաքը:
3. Սանատրուկ	գ. Հռոմեական կայսեր փոխարեն նա հաղթական մենամարտ մղեց գոթերի իշխանի դեմ:
4. Վաղարշ II	դ. Նրա օրոք Արշակունիների թագավորական իշխանությունը դարձավ ժառանգական:
	ե. Նրա օրոք Վարդգեսավան գյուղաքաղաքը զարգացավ և վերածվեց մայրաքաղաքի:

1) 1–դ, 2–զ, 3–ա, 4–ե
2) 1–ե, 2–զ, 3–բ, 4–դ
3) 1–դ, 2–ա, 3–բ, 4–ե
4) 1–ե, 2–ա, 3–բ, 4–դ

26 **Տարեթվերը համապատասխանեցնել Արցախյան պատերազմի հետ կապված իրադարձությունների հետ.**

1. 1993 թ. հուլիսի 23
2. 1992 թ. մայիսի 18
3. 1993 թ. հունիսի 12
4. 1992 թ. օգոստոսի 15
5. 1992 թ. հունվարի 19-20

ա. հայկական ուժերի մուտքը Լաչին
բ. Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը ԼՂՀ-ում
գ. հայկական ուժերի հաղթանակը Աղդամի մոտ
դ. Քելբաջարի (Քարվաճառի) շրջանի ազատագրումը
ե. Կրկժանի ազատագրումը
զ. Մոնթե Մելքոնյանի զոհվելը

1) 1–զ, 2–բ, 3–զ, 4–ե, 5–դ
2) 1–զ, 2–ա, 3–դ, 4–բ, 5–ե
3) 1–զ, 2–ա, 3–զ, 4–ե, 5–դ
4) 1–զ, 2–ա, 3–զ, 4–բ, 5–ե

27 **Ընտրել երկու սխալ պնդումները.**

ա. Անանիա Շիրակացին կատարել է գիտությունների դասակարգում ըստ բնագիտության, թվաբանության ու աստվածաբանության և իր փիլիսոփայական երկերում լայնորեն համադրել է գիտությունների տարբեր բնագավառներից հայտնի մի շարք դրույթներ:
բ. Ղևոնդ պատմիչը նկարագրել է հայ ժողովրդի հերոսական պայքարը Արաբական խալիֆայության դեմ:
գ. Ստեփանոս Տարոնեցու «Պատմութիւն Տարոնոյ» աշխատությունում նկարագրված է օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարը:
դ. Հայ եկեղեցաշինության մեջ առաջացած նշանակալի երևույթ էր կենտրոնագմբեթ կառույցների ի հայտ գալը, որոնք ավելի դիմացկուն էին երկրաշարժերի ժամանակ:
ե. Պահպանված և մեզ հասած հայկական առաջին մանրանկարները, որոնք վերաբերում են VI–VII դդ., չորսն են և ունեն ավետարանական բովանդակություն, կերպարներն արտահայտիչ են, տպավորիչ ու գունագեղ և ազգային ինքնատիպություն են կրում:

1) ա, դ
2) բ, գ
3) ա, գ
4) գ, ե

28 **Ե՞րբ վերելք ապրեց Վասպուրականի թագավորությունը.**

1) X դարի առաջին կեսին
2) X դարի երկրորդ կեսին
3) XI դարի առաջին կեսին
4) IX դարի վերջերին

29 **Ե՞րբ է Իսրայել Օրին ժամանել Ռուսաստան՝ Պետրոս I-ին հանդիպելու համար.**

1) 1702 թ.
2) 1699 թ.
3) 1701 թ.
4) 1700 թ.

30 **Հայոց իշխանի պաշտոնում ո՞վ է հաջորդել Ներսեհ Կամսարականին.**

1) Աշոտ Բագրատունին
2) Սմբատ Բագրատունին
3) Մանվել Մամիկոնյանը
4) Գրիգոր Մամիկոնյանը

31 **Թվարկված պարբերականներից ո՞րն է հրատարակվել Կ. Պոլսում.**

1) «Գիտական շարժում»
2) «Ազատության ավետաբեր»
3) «Արարատ»
4) «Տարեգրություն»

32 **Ո՞ր իրադարձության կապակցությամբ են ասվել հետևյալ խոսքերը.**

«Հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ, նրանց ղեկավարները, որ միշտ առջևի գծում էին, գրեթե բոլորն էլ վիրավոր էին»:

1) Բայազետի 1877 թ. պաշտպանության
2) Շուշիի 1826 թ. պաշտպանության
3) Բայազետի 1829 թ. պաշտպանության
4) Հալիձորի 1727 թ. պաշարման

33 **Հայոց ո՞ր արքան էր մեջբերման մեջ հիշատակված արքայի եղբայրը.**

«Եվ տիրապետեց նա բազմաթիվ բերդերի և գավառների Վայոց ձորի, Խաչենի և Փառիսոսի սահմաններում՝ ավելի քան իր եղբայրը, և չկար մեկը, որ սարսափ պատճառեր Հայաստանին»:

1) Աշոտ II
2) Սմբատ II
3) Աշոտ III
4) Աբաս

34 **Արևմտահայերի երկրորդ համագումարում ընտրված մարմինը, որ դիմեց «Արարատյան Հանրապետության» կառավարությանը, կոչվում էր՝**

1) Արևմտահայ գործադիր մարմին
2) Արևմտահայ ազգային բյուրո
3) Արևմտահայ ազգային պատվիրակություն
4) Արևմտահայ ժամանակավոր կառավարություն

35 **Ի՞նչ նշանակություն ունեցավ Մեծ հայրենադարձությունը Խորհրդային Հայաստանի համար.**

1) Վատթարացավ Խորհրդային Հայաստանի տնտեսական կացությունը:
2) Սփյուռքահայերն իրենց կապիտալ ներդրումներով շենացրին Խորհրդային Հայաստանը:
3) Բարելավվեց ՀԽՍՀ ժողովրդագրական իրավիճակը:
4) Խորհրդային Հայաստանում աճեց գործազրկությունը:

36 **V դարի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հովսեփ Վայոցձորցի կաթողիկոսի նահատակվելը
բ. Մարզպան Ատրվշնասպի փախուստը Ատրպատական
գ. «Հավատո ուխտի» ընդունումը
դ. Վարդանանց ապստամբական կառավարության կազմումը
ե. Վարդ Մամիկոնյանի փախուստը պարսից պատանդությունից
զ. Քաղկեդոնի IV ժողովը

1) գ, դ, զ, ա, բ, ե
2) դ, գ, ա, զ, բ, ե
3) գ, դ, ա, զ, ե, բ
4) դ, գ, զ, ա, ե, բ

37 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը.**

ա. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանի ընտրվելը կաթողիկոս
բ. Ստալինի «Մեծ բեկման տարին» հոդվածի հրապարակումը
գ. Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնության անդամագրվելը կոլտնտեսություններին
դ. «Նոր եկեղեցի» կազմակերպության պառակտիչ գործունեության դատապարտումը Հայոց եկեղեցու Գերագույն հոգևոր խորհրդի կողմից
ե. Դաշնակցության երիտասարդական միության «ինքնավերացման» համագումարը
զ. ՀԿ(բ)Կ կենտկոմի որոշումը Ս. Էջմիածնի վանքը փակելու, կաթողիկոսությունը վերացնելու մասին

1) ա
2) գ
3) զ
4) բ

38 **Գործիչների անունները համապատասխանեցնել պատմական իրադարձություններին.**

1. Գևորգ Գառնեցի
2. Զաքարիա Զագեցի
3. Կատրամիդե թագուհի
4. Անանիա Մոկացի
5. Խոսրովանույշ թագուհի

ա. Սանահինի և Հաղպատի վանքերի հիմնումը
բ. Անիի Կաթողիկե եկեղեցու կառուցումը
գ. Շիրակավանի ժողովի հրավիրումը
դ. Անիի զվարթնոցատիպ եկեղեցու կառուցումը
ե. Բագարան բերդաքաղաքում Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր օծելը
զ. Կաթողիկոսական աթոռի հաստատումը Արգինայում

1) 1–ե, 2–գ, 3–բ, 4–զ, 5-ա
2) 1–գ, 2–ե, 3–ա, 4–դ, 5-բ
3) 1–ե, 2–գ, 3–ա, 4–զ, 5-բ
4) 1–գ, 2–զ, 3–բ, 4–դ, 5-ա

39 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

1) Խորհրդային իրականությունն առանց ուժային միջոցների, գաղափարական ճանապարհով փոփոխելու պայքարի ուղին ընտրած մարդկանց կոչում էին 1960-ական թթ. հայտնված նոր հասկացությամբ՝ այլախոհ:
2) Երևանում տեղի ունեցող հանրահավաքների վայր Թատերական հրապարակն այժմ կոչվում է Անկախության հրապարակ:
3) 1989 թ. դեկտեմբերի 1-ին Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանում ընդունված որոշումը վերնագրված էր «Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերամիավորման մասին»:
4) Ազգային միացյալ կուսակցության 1973 թ. ձևավորված ղեկավար մարմինը՝ խորհուրդը, որդեգրեց մի ռազմավարություն, որը կոչվեց «Անկախություն՝ հանրաքվեի ճանապարհով»:
5) 1991 թ. գարնանը ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Գետաշեն, Մարտունաշեն և Շահումյան բնակավայրերում խորհրդային բանակի հետ համագործակցությամբ ադրբեջանական իշխանությունների իրականացրած գործողությունը կոչվում էր «Կոլցո»՝ «Օղակ»:

40 **Ի՞նչ պատճառներով 1896 թ. ինքնապաշտպանական կռիվների մասնակից վանեցիներն ընդունեցին անգլիական հյուպատոսի միջնորդությունը.**

1) թուրքական իշխանությունների՝ զինված վանեցիների անարգել անցումը Կիլիկիա ապահովելու խոստման
2) զինամթերքի պակասի
3) հայերի կոտորածն անհապաղ դադարեցնելու կառավարական հրամանը հաշվի առնելու
4) փախստականների ներհոսքի հետևանքով առաջացած անմխիթար վիճակի
5) հայկական ուժերի շրջանում սկիզբ առած բախումների

41 **Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ.**

1) Զաքարյանների իշխանապետությունն իր մեջ ընդգրկում էր Շիրակը՝ Անի մայրաքաղաքով, Արարատյան դաշտը, Արաքս գետի միջին հոսանքը, Սևանի շրջակայքը:
2) Հայաստանի հյուսիս–արևելքում՝ Լոռի–Փամբակում, Գարդմանում և Փառիսոսում, Զաքարյաններից կախյալ ստեղծվել էր Վահրամյանների իշխանությունը:
3) Զաքարյանների մի ճյուղ էլ նստում էր Լոռու իշխանության կենտրոն Թմուկ (Թմկա) բերդում:
4) 1126 թ., երբ քաղաքում սով սկսվեց, անեցիները քաղաքը հանձնեցին Շադդադյաններին:
5) Զաքարեի կրտսեր եղբայր Իվանեն (Հովհաննե, Հովհաննես) դարձավ աթաբեկ:

42 **Տրված իրադարձություններից ո՞րն է խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) Տիգրան Երվանդյանի և Կյուրոս Մեծի միացյալ ապստամբությունը Մարաստանի դեմ
2) հունական 10-հազարանոց բանակի նահանջը Հայաստանի տարածքով
3) Փոքր Հայքի անկախացումը Միթրաուստեսի գլխավորությամբ
4) Երվանդ III-ի դառնալը Հայաստանի սատրապ
5) Գավգամելայի ճակատամարտը
6) Ալեքսանդր Մակեդոնացու տերության տրոհումը մի քանի մասերի

43 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնումը
2) Բարձր դռան հատուկ հրամանով «Հայաստան» անվան գործածության արգելումը
3) Մոսկվայի «Հայրենասերների միության» գործունեության դադարեցումը
4) Հնչակյանների կուսակցության ծրագրի հրատարակումը «Հնչակ» թերթում
5) Գ. Արծրունու գլխավորած գաղտնի խմբակի գործունեության ավարտը

44 **1915 թ. ինքնապաշտպանական մարտերի վայրերը համապատասխանեցնել մարտերը ղեկավարած գործիչների անուններին.**

ա. Մկրտիչ Յոթնեղբայրյան
բ. Հայկակ Կոսոյան
գ. Ղուկաս Տեռվլեթյան
դ. Տիգրան Անդրեասյան
ե. Հակոբ Կոտոյան

1) Շապին Կարահիսար
2) Վանի Այգեստան թաղամաս
3) Մուսա լեռ
4) Մուշ
5) Ուրֆա
6) Վանի Քաղաքամեջ թաղամաս

ա	բ	գ	դ	ե

45 **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) Վերջին տարիների պեղումների բացառիկ հայտնաբերումներից են Արմավիրում բացված Արեգ-Միհրի տաճարը և խճանկարազարդ հասարակական բաղնիքը:
2) Քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո Հայաստանում սահմանափակվել է հայկական մեհենագրության գործածությունը, իսկ արքունի գրագրության, հոգևոր քարոզչության և ուսման ասպարեզներում կիրառվել են հունարենը, ապա նաև արամեերենն ու պարսկերենը:
3) Թեոդորոս Ռշտունին Բաղդադի կառավարիչ Մուավիայից Հայաստանի հետ միաժամանակ ստացել էր նաև իշխանություն Վիրքի և Աղվանքի՝ մինչև Ճորա պահակն ընկած տարածքների վրա:
4) Ներսես Լամբրոնացին հիմնադրել էր Սկևռայի դպրոցը, որը գոյատևել է 200 տարի:
5) Բյուզանդական տիրապետության վերջին հենակետերը Կիլիկիայում վերացրել է Ռուբեն III-ը:
6) Կիլիկիայի հայկական պետության և Անտիոքի իշխանության միջև խնդիրներ ծագեցին Դաշտային Կիլիկիայի արևմտյան շրջանների պատճառով:

Բ մակարդակ

46 **Գտնել տերմինների կամ հասկացությունների սխալ բացատրությունները.**

ա. Հայկազուն-Երվանդականների գահակալության սկզբնական շրջանում երկրի արքան հայտնի էր «Հայոց թագավոր» տիտղոսով:
բ. Դարեհ II-ի ստեղծած վարչական միավորները կոչվում էին սատրապություններ:
գ. Աքեմենյան տիրապետության օրոք Հայաստանի արևմտյան մասի կառավարիչը կոչվում էր հյուպարքոս:
դ. Հայկազուն-Երվանդականների օրոք հիշատակվող գործակալների անվանումներից են արքունի-հացարարները, զորավար-սպարապետները, դպիրները, մատռվակները:
ե. Հայկական հելլենիզմի առաջին փուլը կոչվում էր վաղ հելլենիստական ժամանակաշրջան:
զ. Որոշ ուսումնասիրողների կարծիքով Նանեն եղել է նաև ռազմի դիցուհի:
է. Անտիոքոս I Երվանդականի թագը հայտնի է «Արտաշեսյան» կամ «Հայկյան» անունով:

1) ա, գ, դ
2) բ, ե, է
3) գ, զ, է
4) բ, ե, զ

47 **Ընտրել տերմինների կամ հասկացությունների ճիշտ բացատրությունները.**

ա. Արևմտահայության կյանքը կազմակերպող օրենսդիր մարմինը կոչվում էր նաև երեսփոխանական ժողով:
բ. Օսմանյան կայսրությունում գտնվող Երուսաղեմի սուրբ վայրերին տիրելու համար տարբեր եկեղեցիների միջև ծագած վեճը հայտնի է «Արևելյան հարց» անունով:
գ. 1846 թ. ստեղծված և Երևան, Նոր Բայազետ, Նախիջևան, Ալեքսանդրապոլ ու Օրդուբադ գավառներն ընդգրկող վարչական միավորը Երևանի նահանգն էր:
դ. Անդրկովկասում Գ. Գոլիցինի փոխարեն նշանակված Ի. Վորոնցով-Դաշկովի պաշտոնն էր Կովկասի փոխարքա:
ե. Պատգամավորական Կենտրոնական ժողովը Հայաստանում ապրող հայերի ներկայացուցչական համագումարն էր:
զ. Հակահամիդյան շարժման մեջ ազդեցիկ դիրք ուներ երիտթուրքերի «Միություն և փրկություն» կոչվող կազմակերպությունը:
է. Արևմտահայ զորաբաժնի ստեղծման նպատակով կյանքի կոչված գործադիր նոր մարմինը կոչվում էր Հայաստանի ապահովության խորհուրդ:
ը. Հայկական կորպուս կոչվում էր այն զորամիավորումը, որը ձևավորվել էր 1918 թ. մարտի 1-ին Թ. Նազարբեկյանի հրամանատարությամբ:

1) ա, դ, է
2) դ, է, ը
3) ա, բ, գ, է
4) բ, գ, ե, զ

48 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Փոքր Ասիայում բռնկված պատերազմի ավարտից հետո հաշտության պայմանագրում Արտաշես I-ը կարողացավ հատուկ կետ մտցնել, որի շնորհիվ Պոնտոսի հաշվին ընդարձակեց Մեծ Հայքի տարածքը:

բ. Օժանդակելով Մարաստանի սելևկյան սատրապ Տիմարքոսի ապստամբությանը, Արտաշես I-ը նպատակ ուներ նրա հետ դաշնակցելով ազատվելու Սելևկյանների վերահսկողությունից:

գ. Արտաշես I-ի իրականացրած հողային բարեփոխման հետևանքով օրինականացվեցին ազարակատերերի՝ մինչ այդ կատարած զավթումները:

դ. Արտաշես I-ի միավորիչ գործունեության հետևանքով հայկական բոլոր տարածքները, բացառությամբ Փոքր Հայքի, միավորվեցին մեկ միասնական պետության մեջ:

ե. Տիգրան Մեծի նվաճումների հետևանքով Հայկական տերության սահմանները հասան Եգիպտոս:

զ. Տիգրան Մեծի նվաճումների հետևանքով հզոր Հայաստանը Հռոմի առջև փակել էր Արևելք տանող բոլոր ճանապարհները:

է. Տիգրան Մեծի նվաճումների հետևանքով Հայաստանն ամրապնդվեց Միջերկրական ծովի արևմտյան ափերին:

1) բ, գ, ե
2) գ, ե, զ
3) ա, բ, զ
4) գ, դ, է

49 **Թվարկվածներից որո՞նք են պատմական դեպքերի և իրադարձությունների իրական արդյունքներ.**

ա. Լոզանի կոնֆերանսից հետո Հայկական հարցը փոխարինվեց դեպի հայրենիք ներգաղթ կազմակերպելու հարցով:

բ. «Ազգային օջախի» ստեղծումը Լոզանի կոնֆերանսի որոշումների հետևանքն էր:

գ. «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի դրույթների կենսագործման արդյունքում երկրի տնտեսության հիմքում դրվեցին մասնավոր սեփականատիրական և շուկայական տնտեսության սկզբունքները:

դ. 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունների հետևանքը Հայաստանում իշխանափոխությունն էր:

ե. Ադրբեջանի անկախության հռչակագրով Ադրբեջանն ընդգրկված էր լինելու 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի հանրապետության սահմաններում:

զ. 1994 թ. մայիսին հրադադարի հաստատումը զուտ հայկական իշխանությունների նախաձեռնության արդյունք էր:

է. ՀՀ ընդդիմադիր ուժերի միավորման հետևանքով 2008 թ. օգոստոսին ձևավորվեց ՀԱԿ-ը:

1) դ, ե, է
2) բ, դ, զ
3) ա, գ, ե
4) գ, ե, է

50 **Տրված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել հինգերորդը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության.**

ա. Հռոմի դրածո Արտավազդ III-ի վտարումը Հայաստանից
բ. Արտավազդ II-ի եղերական մահը
գ. հռոմեա-պոնտական պատերազմների սկիզբը
դ. Առաջին եռապետության կազմավորումը Հռոմում
ե. Արտաշես II-ի դավադիր սպանությունը
զ. Խառանի ճակատամարտը
է. թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ հռոմեացիների վտարումը Ասորիքից, Կիլիկիայից, Փյունիկիայից, Պաղեստինից և Հրեաստանից
ը. հռոմեա-պոնտական պատերազմների ավարտը
թ. Կրասոսի պարթևական արշավանքի սկիզբը
ժ. Միհրդատ Եվպատորի մահը

1) դ
2) զ
3) է
4) թ

51 **Ըստ ժամանակագրական հաջորդականության՝ թվարկված իրադարձություններից ո՞րն է տեղի ունեցել վեցերորդը.**

ա. Սան Ռեմոյի կոնֆերանսը
բ. Հայաստանի խորհրդայնացումը
գ. Արևմտահայերի 2–րդ համագումարը
դ. Ռուսաստանում նոր տնտեսական քաղաքականության մշակումն ու ընդունումը
ե. գեներալ Թոմսոնի՝ Բաքվի գեներալ-նահանգապետ դառնալը
զ. Վրաստանի խորհրդայնացումը
է. Խորհրդային Հայաստանում պարենհարկ մտցնելը
ը. Փարիզի խաղաղության խորհրդաժողովի բացումը
թ. Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) ստեղծումը
ժ. Արցախահայության 9–րդ համագումարը

1) բ
2) ժ
3) զ
4) դ

52 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Իրաքից հայ գաղթականների առաջին խմբի տեղափոխվելը Հայաստան
բ. Մայիսյան ապստամբությունը
գ. անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը
դ. 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմացրումը
ե. Խաչատուր Ամիրջանյանի, Խաչիկ Սաֆարյանի, Վիգեն Բաբայանի, Մերուժան Հովհաննիսյանի, Գրիգոր Եղյանի, Կարապետ Քիրամիջյանի, Էդուարդ Կակոսյանի ազատազրկման դատապարտվելը
զ. 390-րդ դիվիզիայի կազմացրումը
է. Հնչակյան կուսակցության գործունեության դադարեցումը ԽՍՀՄ տարածքում
ը. Երևանի գեղարվեստի դպրոցի հիմնադրումը
թ. Հորադիզի շրջանի ազատագրումը
ժ. Մարտակերտ քաղաքի ազատագրումը

1) զ, բ, ը, ա, է, դ, զ, ե, թ, ժ
2) ա, գ, բ, է, ը, դ, զ, թ, ե, ժ
3) գ, բ, ա, ը, է, զ, դ, ե, ժ, թ
4) գ, բ, ը, ա, է, զ, դ, ե, ժ, թ

53 **Համապատասխանեցնել Արաբական խալիֆայության գերիշխանության շրջանում Հայաստանում տեղի ունեցած դեպքերն ու տարեթվերը.**

1. 701 թ.
2. 748 թ.
3. 774 թ.
4. 775 թ.
5. 804 թ.
6. 852 թ.

ա. Արտավազդ Մամիկոնյանի հարձակումը արաբ հարկահանների վրա
բ. Ճակատամարտը «Արյան լիճ» կոչվող վայրում
գ. Վարդանակերտի ճակատամարտը
դ. Արմինիա փոխարքայության կազմավորումը
ե. Արճեշի ճակատամարտը
զ. VIII դարի կեսերին տեղի ունեցած հակաարաբական ապստամբության սկիզբը
է. Աշոտ Բագրատունու (Մսակեր) ճանաչումը հայոց իշխան

1) 1–զ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–դ, 6–բ
2) 1–դ, 2–զ, 3–ե, 4–ա, 5–է, 6–գ
3) 1–դ, 2–զ, 3–ե, 4-ա, 5–բ, 6–զ
4) 1–դ, 2–զ, 3–ա, 4–ե, 5–է, 6–բ

54 **Ընտրել ճիշտ պնդումները.**

ա. Հայաստանի տարածքում Արմենիա մայոր և Արմենիա մինոր վարչական միավորներն առաջին անգամ հիշատակվում են Մագնեսիայի ճակատամարտի առնչությամբ:

բ. Հայերի ծագումնաբանության վերաբերյալ վրացական ավանդությունը գրի է առնվել IX-XI դարերի վրաց հեղինակների կողմից:

գ. Բնիկ հայկական ավանդության համաձայն՝ Հայ(ա) Աստծու անունով մեր ժողովուրդը կոչվել է հայ, իսկ երկիրը՝ Հայք, Հայաստան:

դ. Թորգոմա տունը եղել է Եփրատի միջին ավազանում և հիշատակվել է դեռևս Ք. ա. XX-XVIII դարերում:

ե. Հայկական լեռնաշխարհում առաջացած պետական կազմավորումներից Նաիրի թագավորությանը հաջողվել է Ք. ա. 880-ական թվականներից սկսած՝ ամբողջ Հայկական լեռնաշխարհը միավորել իր իշխանության ներքո:

զ. Ասուրա-բաբելական աղբյուրներում Հայաստանն «Ուրարտու» անվամբ հիշատակվում է մինչև Ք. ա. IV դարի առաջին կեսը:

է. Արամը ոչ միայն հետ է շպրտել ասորեստանյան նվաճողներին, այլև հաղթական արշավանքներ կատարել դեպի Փոքր Ասիա:

1) ա, գ, ե
2) բ, գ, է
3) բ, զ, է
4) դ, զ, է

55 **Տրված փաստարկներից որո՞նք են սխալ.**

ա. Թորոս I-ի օրոք Կիլիկյան Հայաստանի սահմաններն ընդարձակվեցին դեպի հյուսիս:

բ. Ապլղարիպ Արծրունուն էին հանձնվել Ադանա, Տարսոն, Սիս քաղաքները և Կոռիկոս ու Պապեռոն բերդերը:

գ. 1254 թ. հայ մոնղոլական պայմանագրով, հայերի բարեկամությունը շահելու համար, մոնղոլները խոստացան վերադարձնել այն տարածքները, որոնք մահմեդականները խլել էին Կիլիկիայից:

դ. 1259 թ. մոնղոլները ձեռնամուխ եղան Ասորիքի նվաճմանը, որին մասնակցում էին նաև հայկական զորքերը, սակայն 1260 թ. տեղի ունեցած ճակատամարտում հայ-մոնղոլական զորքերը ծանր պարտություն կրեցին մամլուքներից:

ե. Մառիի ճակատամարտը և Անտիոքի անկումը վերջ դրեցին Հեթումի՝ քրիստոնեա-մոնղոլական դաշինք ստեղծելու ծրագրին:

զ. Լևոն VI-ի ժամանակ Կիլիկյան հայկական թագավորությունը, բացի մայրաքաղաքից, ընդգրկում էր Անավարզա քաղաքը և մի քանի բերդեր Լեռնային Կիլիկիայում:

է. Նեղվելով կարամանների ու մոնղոլների հարձակումներից, նաև ծանր հարկերից՝ Կիլիկիայի հայ բնակչության և իշխանների մի մասը թագավորության անկումից հետո ստիպված հեռացավ հայրենիքից:

1) բ, դ, է
2) ա, գ, ե
3) բ, դ, զ
4) ա, բ, է

56 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

ա. Մծբինի հաշտության հետևանքը Հյուսիսային Միջագետքում հռոմեացիների դիրքերի թուլացումն էր:
բ. Մոնղոլների տիրապետության շրջանում երբեմնի վաճառաշահ Անի, Դվին, Արճեշ և այլ քաղաքներ վերածվեցին ավանների:
գ. Խաղխաղի ճակատամարտի հետևանքը պարսից զորավար Միհրանի քսանհազարանոց զորքի պարտությունն էր:
դ. Գյուտ կաթողիկոսի՝ Տիզբոն մեկնելու պատճառը Խոսրով II-ի գումարած ժողովին մասնակցելն էր:
ե. VII դարի կեսերի արաբական արշավանքների հետևանքը Սասանյան տերության կործանումն էր:
զ. 1243 թ. Սիսի եկեղեցական ժողովի հետևանքը Քաղկեդոնի երկաբնակության դավանանքի ընդունումն էր:
է. Հայաստանում Չարմաղանի հաջողությունների պատճառը Զաքարյանների իշխանապետությունում ներիշխանական երկպառակություններն էին:

1) գ, դ, ե
2) բ, ե, է
3) բ, զ, է
4) ա, գ, ե

57 **Կատարել համապատասխանեցում.**

Անուն	**Իրադարձություն**
1. Ա. Ալիխանյան	ա. եռագույն հեռուստատեսության և լուսահեռագրության սարքի ստեղծելը և ցուցադրելը Երևանում
2. Ա. Մնջոյան	բ. «Կոմիտասի վերջին գիշերը» նկարաշարի ստեղծումը
3. Հ. Ադամյան	գ. սինթետիկ կաուչուկի արտադրության սկզբնավորումը Հայաստանում
4. Վ. Աճեմյան	դ. «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից» նկարաշարի ստեղծումը
5. Գ. Խանջյան	ե. գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի ստեղծումը
6. Ա. Խարազյան	զ. էլեկտրոնային արագացուցչի կառուցումը
7. Ստ. Ղամբարյան, Լ. Ռոտինյան	է. Լենինականի (Գյումրի) պետական թատրոնի ստեղծումը
	ը. պետական շրջիկ թատրոնի կազմակերպումը

1) 1–զ, 2–ե, 3–ա, 4–ը, 5–բ, 6–է, 7-գ
2) 1–ա, 2–գ, 3–զ, 4–է, 5–դ, 6–ը, 7-ե
3) 1–զ, 2–ե, 3–ա, 4–է, 5–դ, 6–ը, 7-գ
4) 1–զ, 2–գ, 3–ա, 4–ը, 5–բ, 6–է, 7-ե

58 **Տրված պնդումներից որո՞նք են սխալ.**

ա. Սևանի հարավարևմտյան մասում իշխող Մելիք-Շահնազարյանները Նադիր շահի օրոք ավելի են ամրապնդել իրենց դիրքերը:
բ. 1724 թ. Արցախի ազատագրական ուժերը թուրքական բանակի դեմ համատեղ պայքարի պայմանագիր են կնքել Գանձակի մահմեդականների հետ:
գ. Մովսես Սարաֆյանի ծրագրի համաձայն Հայաստանի կառավարությունը Պետերբուրգում պետք է ունենար իր դեսպանը:
դ. «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» գիրքը խորհրդարանական հանրապետություն ստեղծելու ծրագիր էր:
ե. 1701 թ. մինչև իր կյանքի վերջը Արցախում եռանդուն գործունեություն է ծավալել Եսայի Հասան Ջալալյանը:
զ. Ըստ Շ. Շահամիրյանի առաջարկած Հայաստանի ազատագրության նախագծի՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ խորհրդարանական կառուցվածքով:
է. Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսը 1679 թ. բանակցություններ է սկսում Ռեչ Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ:

1) ա, գ, ե
2) բ, դ, զ,
3) ա, գ, դ,
4) բ, դ, է

59 **Ստորև թվարկված փաստարկներից ո՞ր երեքն են ճիշտ.**

ա. Հայկական 408-րդ դիվիզիան կռվել է Ռումինիայում, Հունգարիայում, Ավստրիայում և Չեխոսլովակիայում:
բ. 1948 թ. սեպտեմբերի 14-ին եղավ ԽՍՀՄ կառավարության որոշումը՝ սփյուռքահայերի ներգաղթը դադարեցնելու մասին:
գ. 1967 թ. Հայաստանում գործում էր 112 գիտահետազոտական հիմնարկ՝ 20 հազար գիտաշխատողներով:
դ. 1945 թ. մայիսի 28-ին ՀՀ նախկին վարչապետ Ա. Խատիսյանը դիմեց Ստալինին, Թրումանին և Չերչիլին՝ խնդրելով ջանքեր գործադրել Հայկական հարցի արդարացի լուծման ուղղությամբ:
ե. 1953 թ. նոյեմբերին ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Թովմասյանին փոխարինեց Գրիգոր Հարությունյանը:
զ. Անդրանիկ Մարգարյանը 1974 թ. մարտին «հակախորհրդային գործունեության համար» դատապարտվել է երեք տարվա ազատազրկման:
է. Հայոց ցեղասպանության հարցը 1983 թ. քննարկվեց Եվրախորհրդում:
ը. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին մասնակցեցին ավելի քան 60 երկրների և միջազգային տասնյակ կառույցների պատվիրակություններ:

1) զ, ե, է
2) բ, է, ը
3) ա, դ, է
4) բ, գ, ը

60 **Թվարկվածներից որո՞նք են բնորոշ նէպին.**

1) դրամական աշխատավարձի կիրառումից հրաժարումը
2) ազատ առևտրի վերականգնումը
3) վարձու աշխատանքի կիրառումը
4) պարենհարկի փոխարեն պարենմասնատրման կիրառումը
5) հարկի չափի որոշվելը մինչև ցանքսը և տարվա ընթացքում այն երկու անգամ փոփոխելը
6) գյուղատնտեսական մթերքների բռնագրավումների ժամանակավոր դադարեցումը
7) մանր և միջին բոլոր ձեռնարկությունների պետականացումը
8) հացահատիկի և այլ մթերքների բռնագրավումների արգելումը

61 **Ընտրել Բագրատունյաց թագավորության թուլացման պատճառները.**

1) երկրի խոշոր իշխանների կենտրոնախույս ձգտումները
2) մոնղոլական արշավանքները Հայաստան
3) Արաբական խալիֆայության հզորացումը
4) Անիի թագավորության բաժանումը երկու մասի
5) Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունը
6) երկրի տնտեսական կյանքի անկայուն վիճակը
7) քաղաքային կյանքի անկումը Բագրատունյաց Հայաստանում

62 **Ստորև թվարկված պատմական իրադարձությունների պատճառներից և հետևանքներից որո՞նք են ճիշտ.**

1) Իշպուինիի արձանագրած առաջին խոշոր հաջողությունները նրա իրականացրած ռազմական բարեփոխումների հետևանք էին:
2) Մենուայի հաղթարշավների հետևանքով Հայկական լեռնաշխարհի հիմնական մասը միավորվեց մեկ պետության մեջ:
3) Սարդուրի II-ի կողմից կախյալ թագավորությունները վերացնելու և պետության վարչական միավորներ դարձնելու արդյունքում կառավարման ոլորտում անցում կատարվեց դաշնային կառավարման:
4) Սարդուրի II-ի կողմից Բաբելոնիայի վերանվաճման հետևանքով հայոց աշխարհակալության հարավային սահմանները կրկին հասան Միջերկրական ծովի արևելյան ավազանին:
5) Ք. ա. VII դ. վերջերին Ասորեստանը վերականգնեց դիրքերը՝ կրկին դառնալով Վանի տերության մրցակիցն Առաջավոր Ասիայում:
6) Վանի թագավորության և սկյութների միջև հաստատված դաշնակցային հարաբերությունների հետևանքը վերջիններիս՝ Փոքր Ասիայի արևելքում հաստատվելն էր:
7) Ռուսա II-ի օրոք Ասորեստանի և Վանի համահայկական թագավորության միջև մղված պատերազմն ավարտվեց խաղաղության և բարեկամության պայմանագրի կնքմամբ:
8) Վանի համահայկական թագավորության անկմանը նպաստեցին արևելքից երկիրն ասպատակող կիմերները:

63 **Ընտրել ճիշտ պնդումները.**

1) XVI դ. առաջին կեսից միայն զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ և պահպանեցին իրենց ներքին ինքնուրույնությունը:
2) Մելիքները պարտավոր էին իրենց տիրապետության սահմաններում ճնշել խռովարարներին, պատերազմների ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին և պաշտպանել երկրի սահմաններն օտար հարձակումներից:
3) Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից 1562 թ. Վենետիկ ուղարկված մահտեսի Շահմուրատի գլխավորած պատվիրակության նպատակն էր եվրոպական տերություններին համոզել, որպեսզի օգնեն հայերին ազատագրվելու թուրք-պարսկական տիրապետությունից:
4) Կարա-Յուսուֆի կառավարման վերջին շրջանում Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում և այլ վայրերում հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը:
5) 1605 թ. Արարատյան դաշտ ներխուժած և Վասպուրականում ձմեռած օսմանյան բանակը 1606 թ. տեղի ունեցած վճռական ճակատամարտում պարտություն կրեց և համաձայնեց հաշտության պայմանագիր կնքելու պարսիկների հետ:
6) Օսմանյան թուրքերը 1453 թ.՝ Կ. Պոլիսը գրավելուց երկու տարի հետո, թույլատրեցին հիմնադրել հայոց պատրիարքություն, որը պետք է տնօրիներ Մերձավոր Արևելքի և Օսմանյան պետության հայ համայնքների հոգևոր կյանքը:
7) Հայերի բռնագաղթի միջոցով որակյալ արհեստավորներ ու երկրագործներ փոխադրելով ու բնակեցնելով Իրանի ներքին շրջաններում՝ շահ Աբասը նպատակ ուներ զարկ տալու իր երկրի տնտեսության զարգացմանը:

64 **Ստորև բերված փաստարկներից որո՞նք են սխալ.**

1) Կիլիկիայում հայտնի «Փոքր Չելլոյի» առաջնորդը խիզախ գործիչ Թորոս Ծառուկյանն էր:
2) 1893 թ. Արաբոն 16 հոգով անցնում է Արևմտյան Հայաստան և, Գյալիսորի ձորում կռվի բռնվելով քրդերի ու թուրքերի դեմ, իր ընկերների հետ հերոսաբար զոհվում է:
3) 1901 թ. Գևորգ Չավուշն ու Անդրանիկը վրեժխնդիր են լինում Աղբյուր Սերոբի սպանության համար՝ սպանելով Բշարե Խալիլին:
4) Հրայրը, որ հայտնի է Դժոխք մականունով, ծնվել է 1864 թ. Սասունի Ահարոնք գյուղում, սովորել Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, զբաղվել ուսուցչությամբ:
5) Անդրանիկ Օզանյանը ծնվել է 1865 թ. փետրվարի 25-ին Շապին Կարահիսար քաղաքում, սովորել է տեղի Մուշեղյան վարժարանում:
6) 1906 թ. Անդրանիկը հեղինակել է «Մարտական հրահանգներ» կանոնագիրքը:
7) 1891 թ. Թավրիզում դաշնակցության հիմնադրած «Խարիսխ» զինագործական արհեստանոցը վերածվել է զենքի արտադրության կարևոր կենտրոնի:
8) Հնչակյանները 1890 թ. հուլիսին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպեցին խաղաղ ցույց:

65 **Տրված իրադարձություններից որո՞նք են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը.**

1) քրիստոնեական եկեղեցու «Հավատո հանգանակի» ընդունումը
2) մազքութների ներխուժումը Հայաստան և Վաղարշապատի գրավումը
3) Սանեսանի պարտությունը Ցլու գլուխ լեռան ճակատամարտում
4) Արիստակես կաթողիկոսի սպանությունը
5) Դատաբեն Բզնունու և Բակուր բդեշխի մահապատիժը
6) Վրթանես Ա կաթողիկոսի գահակալման ավարտը
7) Շապուհ II-ի կողմից պատերազմ սկսելը Հռոմեական կայսրության դեմ և Մծբինի գրավման անհաջող փորձը
8) Վաչե Մամիկոնյան սպարապետի և իր զինակիցների նահատակությունը
9) Տիրան թագավորի բնակություն հաստատելը Կուաշում

66 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) մեզ հասած ամբողջական մանրանկարներով զարդարված առաջին ձեռագրի ստեղծումը
2) Աշոտ III–ին թագադրելու հանդիսությունները
3) Սմբատի փոխարեն Գագիկ Արծրունուն խալիֆի կողմից Հայաստանի թագավոր ճանաչելը
4) Գուրգենի կողմից Կյուրիկյան հարստության հիմնումը
5) Անիի Սմբատաշեն պարիսպների կառուցման ավարտը
6) Բջնիի նշանավոր ամրոցի կառուցումը

67 **Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

1) թուրք-ադրբեջանցի հրոսակների կողմից Շուշի քաղաքի հայկական թաղամասերի հրկիզումը
2) Փարիզում հայկական պահանջների համատեղ հուշագրի ստորագրումը
3) Գ. Նժդեհի կողմից Գորիսի ազատագրումը բոլշևիկյան զորքերից
4) «Թուրքական ազգային ուխտի» ընդունումը քեմալական խորհրդարանի կողմից
5) Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի հրավիրումը Բաքվում
6) Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) ստեղծումը

68 **Տարեթվերը համապատասխանեցնել իրադարձություններին.**

ա. Էվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգության բեմականացումը Արտաշատում	1. 58 թ.
բ. Գառնիի ամրոցի կառուցումը	2. Ք. ա. 5 թ.
գ. Գայոս Կեսարի Հայաստան ուղարկվելը մեծ բանակով	3. Ք. ա. 18 թ.
դ. Բակուր արքայի գահընկեց լինելը	4. 76 թ.
ե. Կորբուլոնի գլխավորությամբ հռոմեական լեգեոնների ներխուժումը Մեծ Հայքի թագավորություն	5. Ք. ա. 8 թ.
զ. Տիգրան III-ի գահակալության ավարտը	6. Ք. ա. 53 թ.
	7. 163 թ.

ա	բ	գ	դ	ե	զ

69 **Կատարել համապատասխանեցում.**

Մականուն	**Անուն**
ա. Մեծն Մուրադ	1. Մատթեոս Սարգսյան
բ. Փարամազ	2. Կարապետ Թուր-Սարգսյան
գ. Իշխան	3. Ստեփան Զորյան
դ. Ռոստոմ	4. Ավետիս Նազարբեկյան
ե. Կոմս	5. Համբարձում Պոյաճյան
զ. Գարուն Աղասի	6. Վահան Փափազյան
	7. Հովսեփ Արղության

ա	բ	գ	դ	ե	զ

70 **Ստորև տրված պնդումներից գտնել՝ որոնք են ճիշտ, որոնք՝ սխալ.**

1) ՀՅԴ ծրագրի «Նպատակ» բաժնում ասվում էր, որ ապստամբության ճանապարհով անհրաժեշտ է հասնել Արևմտյան Հայաստանի ազատությանը, որով այդ փուլում հասկացվում էր հայկական նահանգների անկախության հաստատումը:
2) Մայիսյան երեք գլխավոր ճակատամարտերում՝ Սարդարապատ, Բաշ Ապարան, Ղարաքիլիսա, հայկական զորքերը փայլուն հաղթանակ տարան:
3) Հայ ժողովրդի մայիսյան հաղթանակները վիժեցրին հայերին իսպառ ոչնչացնելու՝ քեմալականների կառավարության քաղաքականությունը:
4) Խորհրդային երկրում արդյունաբերացման գործընթացն սկսվել է այն ժամանակ, երբ ԽՍՀՄ ղեկավարությունը հայտարարեց նեպից հրաժարվելու մասին:
5) Սփյուռքահայ նկարչուհի Սոնիա Պալասանյանի նախաձեռնությամբ է Երևանում կազմակերպվել «Մկրտչյան» պատկերասրահը:
6) 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանը և Արշավիր Շիրակյանը իրականացրեցին Բեհաէդդին Շաքիրի և Ջեմալ Ազմիի մահապատիժը: